# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

## ՈՐՈՇՈՒՄ

<<29>> ----------07----------2025թ. N ՄՈ/742 -Ա

ք. Արմավիր

### «ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԼԵՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ, 163-րդ և 164-րդ հոդվածներով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 13-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Լենա Խաչատրյանի 2025 թվականի հուլիսի 25-ի դիմումը.

**ո ր ո շ ու մ ե մ՝**

1. «Շահումյանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Լենա Խաչատրյանին տրամադրել 2025-2026 թվականների ամենամյա երկարացված արձակուրդի մասը՝ 2025 թվականի օգոստոսի 5-ից 28-ը ներառյալ՝ 18 աշխատանքային օր տևողությամբ:
2. Լենա Խաչատրյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Շահումյանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Շահումյանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կրթական աջակցությունների և դաստիարակչական աշխատանքների համակարգող Ալվարդ Գրիգորյանին:

3. «Շահումյանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կրթական աջակցությունների և դաստիարակչական աշխատանքների համակարգող Ալվարդ Գրիգորյանի վարձատրությունը 2025 թվականի օգոստոսի 5-ից 28-ը ներառյալ իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
4. Լենա Խաչատրյանին աշխատանքի մեջ համարել 2025 թվական օգոստոսի 29-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ,**
**ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝**

Ստորագրող
ԲԱՐՍԵՂ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ
2808860099
2025-07-29 17:31:55 GMT+4
Հավաստագիրը ստեղծված է ԳԾՊԿ-ի կողմից

**ԲԱՐՍԵՂ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ**